

## Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը՝ դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

### Անվճար խնամք՝

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտն ըստ Դաշնային աղքատության մակարդակի կազմում է մինչև 200%, դուք կարող եք անհատուց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

### Զեղչված խնամք

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 200-500%, ապա ձեզնից կպահվի կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed, AGB) Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում այն գումարները, որոնք փոխանցվում են հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) ձեր ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտատուների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

**Traducción disponible:** Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեռք բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

**St. Rose Dominican - Rose de Lima Campus** 102 East Lake Mead Parkway, Henderson, NV 89015

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 702-616-7558 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345  
[www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp](http://www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp)

**St. Rose Dominican - San Martín Campus** 8280 West Warm Springs Rd, Las Vegas, NV 89113

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 702-492-8009 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345  
[www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp](http://www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp)

**St. Rose Dominican - Siena Campus** 3001 St. Rose Parkway, Henderson, NV 89052

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 702-616-5002 | **Ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345  
[www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp](http://www.dignityhealth.org/las-vegas/paymenthelp)